ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.1-26

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի

նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված

մրցութային հանձնաժողովի նիստի

2026թ. մարտի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի «2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և 2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N4094-Լ հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2026 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 7-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով մրցույթին ներկայացվել է 2 (երկու) հայտ, հետևյալ ֆինանսական առաջարկներով՝

- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի (2,000,000.0 (երկու միլիոն) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)),
- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի (3,515,000.0 (երեք միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)) կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի

կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին:

Սակայն նշվեց, որ թվով 2 (երկու) կազմակերպության կողմից ներկայացված հայտերում առկա են որոշակի տեխնիկական խնդիրներ, որոնք չեն կարող համարվել բովանդակային կամ իրավական թերություններ: Ուստի, մրցութային Հանձնաժողովի կողմից առաջարկվեց շտկել դրանք, մասնավորապես առաջարկել՝

- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ին՝
  - հավելյալ ներկայացնել փորձը հավաստող առնվազն 1 պայմանագրի հանձնման-ընդունման ակտ կամ այդ պայմանագրի կատարումն հավաստող այլ փաստաթղթեր և/կամ տեղեկանքներ,
  - ֆինանսական նախահաշվում ծրագրի տևողությունը փոփոխել՝ «01.04.2026-30.09.2026»-ի փոխարեն սահմանելով «01.05.2026-31.10.2026»:
- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ին՝
  - հստակեցնել՝ արդյոք կազմակերպությունը պետք է յուրաքանչյուր փուլում ապահովի 300 հարցաթերթիկի առկայությունը, այն պարագայում, երբ Հրավերով պահանջվում էր ամբողջ տարվա ընթացքում 300 հարցաթերթիկի առկայություն,
  - նվազեցնել ֆինանսական նախահաշվով ներկայացված բյուջեն, մասնավորապես՝ աշխատավարձի և վարչական ծախսերի տողերով ներկայացված ծախսերը, ֆինանսական նախահաշիվը ներկայացնել 8 ամսվա գործունեության համար՝ հաշվի առնելով, որ պայմանագիրը ապրիլին հնարավոր չի կնքել:

Միաժամանակ, տեղեկացնել «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ին, որ «Զբոսաշրջության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով նախատեսված է, որ **զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը** իրավաբանական անձ է, որը սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու: Պետք է կազմակերպությունը հավաստի, որ Հայտում ներկայացված ծրագրով սահմանված ճանաչողական այցը չի կազմակերպվելու զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի կողմից, սակայն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը դրամաշնորհի շրջանակում կարող է աջակցություն տրամադրել այլ զբոսաշրջային ծառայություն մատուցող անձի կողմից կազմակերպվող ճանաչողական այցերին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթին թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ի

կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին:

2. **Առաջարկել** Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպությանը՝

- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ին,
- «Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ին՝

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Հանձնաժողովի որոշման վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել իրենց կողմից ներկայացված հայտերում առկա որոշակի տեխնիկական խնդիրները և վերանայել ֆինանսական առաջարկները:

Մասնավորապես՝

- **«Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ**-ին՝

- հավելյալ ներկայացնել փորձը հավաստող առնվազն 1 պայմանագրի հանձնման-ընդունման ակտ կամ այդ պայմանագրի կատարումն հավաստող այլ փաստաթղթեր և/կամ տեղեկանքներ,

- ֆինանսական նախահաշվում ծրագրի տևողությունը փոփոխել՝ «01.04.2026-30.09.2026»-ի փոխարեն սահմանելով «01.05.2026-31.10.2026»,

- տեղեկացնել «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ին, որ «Զբոսաշրջության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով նախատեսված է, որ **զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը** իրավաբանական անձ է, որը սպառողին թերթոնների, քարտեզների և գրավոր այլ տեղեկատվական նյութերի միջոցով անվճար տրամադրում է անկողմնակալ և համարժեք տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչությունների, դրանց տեղակայման վայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ՝ առանց զբոսաշրջային ծառայություն մատուցելու: Պետք է կազմակերպությունը հավաստի, որ Հայտում ներկայացված ծրագրով սահմանված ճանաչողական այցը չի կազմակերպվելու զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի կողմից, սակայն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը դրամաշնորհի շրջանակում կարող է աջակցություն տրամադրել այլ զբոսաշրջային ծառայություն մատուցող անձի կողմից կազմակերպվող ճանաչողական այցերին:

- **«Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ**-ին՝

- հստակեցնել՝ արդյոք կազմակերպությունը պետք է յուրաքանչյուր փուլում ապահովի 300 հարցաթերթիկի առկայությունը, այն պարագայում, երբ Հրավերով պահանջվում էր ամբողջ տարվա ընթացքում 300 հարցաթերթիկի առկայություն,

- նվազեցնել ֆինանսական նախահաշվով ներկայացված բյուջեն, մասնավորապես՝ աշխատավարձի և վարչական ծախսերի տողերով ներկայացված ծախսերը, ֆինանսական նախահաշիվը ներկայացնել 8 ամսվա գործունեության համար՝ հաշվի առնելով, որ պայմանագիրը ապրիլին հնարավոր չի կնքել:

3. Ծրագրի հավելված 2-ի 4.1 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպություն՝

- **«Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ն,**
- **«Գեղարդի հովտի ագրոտուրիզմի զարգացման» ՀԿ-ն**

կճանաչվի հաղթող՝ պահանջվող շտկումները կատարելուց և շտկված տարբերակները Հանձնաժողովին ներկայացնելուց հետո:

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Ա.Ոսկանյան - _____

Շ.Հովսեփյան - _____